



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**

*1361-Ն/2*

*09 հոկտեմբեր* 2018թ.

**2018 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ (ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ ՔՆՆԱՇՐՋԱՆ)՝  
ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել <<2018 թվականի (հոկտեմբեր - նոյեմբեր քննաշրջանի)՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը>>՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Քննություններն անցկացնել 2018 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ:
3. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել Կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետին:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կրթության և գիտության նախարարին:

**ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

08.10.2018



**X** *Harutyunyan Arayk*

VERIFIED OCSP 08.10.2018 19:10:57 GMT+4

Signed by: HARUTYUNYAN ARAYK 1209790378